բեկան հասակում երդուեալ հաւատարմատար Ցակովբ Տէր Յովհաննիսեանը, թողնելով 6 մանր երեխաներ անապահով վիճակում։

Հանգուցեալը ութսունական թուականների հայ աչքի ընկնող գործիչներից մէկն էր։ Վարել է բաւական շատ պաշտօններ դպրոցական և հոգևոր ասպարիզում.—եղել է ուսուցիչ և տեսուչ Գայիանեան ուսումնարանում—Ձրիաբար, ուսուցիչ և մի ընդարձակ հոգաբարձու Ներսիսեան Դպրոցում, թեմական վերատեսուչ Վրաստանի վիճակի հայ ծխական դպրոցների և վերջապէս երկու տարի հրատարակել է «Մանկավարժական Թերթ» ամսագիրը։ Քանի մի տարի վարում էր նաև Թիֆլիսի Հայոց թեմական Առենի իրաւաբանի պաշտօնը։ Ինչնական թուականներից հանգուցեալը թողեց դպրոցական ծառայութիւնը և նուիրուեց իւր մասնագիտութեան—փաստաբանութեան։

Ցակովբ Տէր Յովհաննիսեանը յայտնի էր իւր սիրալիր բնաւորութեամբ և իբրև հասարակական գործիչ - իւր մաքուր և անխարդախ գործունէութեամբ։

3. ՍՏԵՓԱՆ ԶԵԼԻՆՍԿԻ

Հոկտեմբերի 22-ին երկարատև հիւանդութիւնից յետոյ Թիֆլիսում վախճանուել է յայտնի բանաստեղծ Ստեփան Զելինսկին, որ հայ ծագումն ունէր և լաւ գիտէր հայերէն։ Հանգուցեալը ծանօթ էր մեզ մօտ իբրև կովկասագէտ և իբրև անդրկովկասեան գիւղական կեանքի լաւագոյն ուսումնասիրող։

Զելինսկին թողել է բաւական գրաւոր գործեր, նա աշխատակցել է «Մշակ» և «Արձագանք» լրագիրներին, հրատարակել է հայերէն լեզուով մի քանի գիւղատնտեսական գրքոյկներ և Ալէքսանդրօպոլի ու Զանգեզուրի դաւառների ուսումնասիրութիւններ։ Թողել է նաև մի քանի անտիպ աշխատութիւններ։ Մենք կարծում ենք հանգուցեալը պիտի թողած լինի նաև մի աշխատութիւն մեր Յովհան Մանդակունի և Գրիգոր Նարեկացի մատենագիրների մասին, որովհետև հանգուցեալը մի քանի տարի առաջ մեզ ուղղել էր մանրամասն հարցեր այդ մատենագիրների գրուածքների զանազան կէտերի վերաբերեալ, որոնց մանրամասն պատասխանը հաղորդեցինք իրան։

Հանգուցեալը մասնակցում էր և հայ հասարակական գործերին. մի ժամանակ նա վարեց Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան փոխ-նախագահի պաշտօնը և մասնակցեց Մորդվինովի կատարած վերելքին Արարատ լերան վերայ, որտեղից և իսկապէս սկիզբն առաւ նորա այն երկարատև հիւանդութիւնը, որ վերջիվերջոյ գերեզման տարաւ այդ համակրելի գործչին։

ՀԱԵ